

ՄԵԼԻԲ ՄԵԼԻՔՅԱՆ
*ՀՀ Վճարելի դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության
առաջատար մասնագետ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող*

MELIK MELIKYAN
*Leading specialist of the Department of Legal Expertise
of the Cassation Court of the RA,
Master student at YSU Faculty of Law*

МЕЛИК МЕЛИКЯН
*Ведущий специалист Службы правовой
экспертизы Кассационного суда РА,
Студент магистратуры
юридического факультета ЕГУ*

**ՕՐԻՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԽՈՉՂՆԴՈՏԵԼՈՒ ՀԱՆՑԱՏԵՍԱԿԸ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՈՒՐՔՈՒՄ**

**INTERVENTION OF LEGAL ENTREPRENEURSHIP AND OTHER
ECONOMIC ACTIVITIES IN THE CRIMINAL CODE OF RA**

**ВОСПРЕпятСТВОВАНИЕ ЗАКОННОЙ
ПРЕДПРИНИМАТЕЛЬСКОЙ ИЛИ ИНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В
УГОЛОВНОМ КОДЕКСЕ РА**

Սույն հոդվածի քննարկման առարկա հանդիսացող թեմայի արդիականությունը պայմանավորված է ինչպես ձեռնարկատիրական և տնտեսական հարաբերությունների լայնատիրոյթ շրջանակների, այնպես էլ դրա վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի իրավանորմի դիսպոզիցայում առկա մի շարք իրար ներհակող հասկացությունների առկայության և վերջապես, տվյալ հանցատեսակի՝ քրեական օրենսգրքում նախատեսված լինելու անհրաժեշտության հետ:

Օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելու հանցատեսակը՝ ՀՀ քրեական օրենսդրությունում նախատեսվել է 2003 թվականին՝ գործող քրեական օրենսգրքի ընդունմամբ:

Վերջին տասնամյակի դատական պրակտիկան ցույց է տալիս, որ ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի մեղադրանքով գործեր դատարաններում չեն

ստացվել¹, իսկ օրենսդրական զարգացման միտումները և հատկապես այն փաստը, որ ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում՝ (այսուհետև նաև՝ Նախագիծ) տվյալ հանցատեսակը չի նախատեսվել, ակամայից իրավական հարց է առաջացնում այն մասին, թե արդյո՞ք նպատակահարմար է դրա նախատեսումը քրեական օրենսդրության մեջ, թե՞ ոչ:

Մի շարք զարգացած տնտեսական մակարդակ ունեցող երկրների (Ֆրանսիայի, Գերմանիայի, Ճապոնիայի, Շվեդիայի, Հոլանդիայի, Լեհաստանի, Իսպանիայի և Իտալիայի և այլն) քրեական օրենսդրություններում բնականոն ձեռնարկատիրական հարաբերությունների դեմ ուղղված հանցագործություններ չեն նախատեսվել, փոխարենը դրանց վերաբերյալ կարգավորումները նախատեսված են առանձին նորմատիվ-իրավական ակտերով²:

Մոլդովիայի, Լատվիայի, Ղազախստանի, Էստոնիայի, Ուկրաինայի, Բելառուսի, Ղրղզստանի, Ուզբեկստանի քրեական օրենսգրքերում, չնայած նախատեսված են ձեռնարկատիրական գործունեության դեմ ուղղված հանցագործության որոշ տեսակներ, սակայն քննարկվող հանցատեսակը դրանցում բացակայում է:

Օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը հանցագործության վերաբերյալ իրավակարգավորումներ հանդիպում ենք Ռուսաստանի, Վրաստանի, Ուզբեկստանի քրեական օրենսգրքերում՝ ընդ որում տվյալ երկրների օրենսդիրները տարբեր մոտեցումներ են դրանցում ցուցաբերել:

Ռուսաստանի քրեական օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասը նույնական է ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի հետ, իսկ որպես տվյալ հանցագործության որակյալ տեսակ նախատեսված է դրա կատարումը՝ ուժի մեջ մտած դատական ակտի, կամ խոշոր վնաս հասցնելու դեպքում³:

Թուրքմենստանի քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասը նույնանման է քննարկվող հանցատեսակի ներպետական կարգավորման հետ, սակայն ի տարբերություն դրա, այն չի նախատեսում տվյալ հանցագործության որակյալ տեսակներ⁴:

Վրաստանի քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածը՝ ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի նյութական հանցակազմ է, դրանում չի նշվում պաշտոնատար անձի մասին, և ինչպես Թուրքմենստանի վերոգրյալ կարգավորման դեպքում, չի նախատեսում տվյալ հանցատեսակի որակյալ տեսակներ⁵:

Հարկ է նշել, որ բացի վերոգրյալ առանձնահատկություններից՝ թե՛ Ռուսաստանի, թե՛ Թուրքմենստանի և թե՛ Վրաստանի վերոգրյալ իրավանորմերում

¹ Տե՛ս datalex.am դատական տեղեկատվական համակարգում:

² Տե՛ս *Силаев Алексей Викторович*, Проблемы уголовной ответственности за незаконное предпринимательство: по материалам УрФО: диссертация ... кандидата юридических наук: 12.00.08 [Место защиты: Челябин. гос. ун-т], Челябинск, 2011, 61 էջ:

³ Տե՛ս http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/148d9b6a72b5dd615dd9de377276493bf477ed54/-24.02..2020:

⁴ Տե՛ս <https://www.wipo.int/edocs/lexdocs/laws/ru/tm/tm015ru.pdf>- 24.02.2020:

⁵ Տե՛ս <https://matsne.gov.ge/ka/document/download/16426/143/ru/pdf-24.02.2020>:

տվյալ հանցագործության «թիրախ» հանդիսացող անձանց շրջանակում բացակայում է ոչ առևտրային կազմակերպությունը⁶, ինչպիսին նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված սուբյեկտների շարքում, ինչը, մեր կարծիքով, արդարացված է, քանի որ չնայած նրան, որ ոչ առևտրային կազմակերպությունը, ըստ էության, կարող է նաև իրականացնել որոշակի տնտեսական գործունեություն, սակայն դրանց բնութագրական լինելով, օրինակ, այնպիսի գործունեության ձևեր, որոնք վերբերվում են կրոնական, քաղաքական, սոցիալական տարբեր նպատակներին՝ խոչընդոտելու միջոցով փաստ կհասցվի, ըստ էության, այլ օբյեկտների, իսկ տնտեսությանն ու առավել ևս ձեռնարկատիրական գործունեության հասցված փաստը կկրի ֆակուլտատիվ բնույթ, ուստի տվյալ դեպքերում տվյալ արարքներն իրենց իրավական գնահատականին կարժանանան քրեական օրենսգրքի հատուկ մասի այլ նորմերով:

Սույն աշխատության քննարկման առարկա հանդիսացող հանցատեսակի շուրջ բարձրացված իրավական հարցի կապակցությամբ անհրաժեշտ է դիտարկել դրա քրեաիրավական առանձին տարրերը:

Այսպես՝ հանցագործության անմիջական օբյեկտը ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կապակցությամբ առաջացած հասարակական հարաբերությունն է, որին մասնակցում է անհատ ձեռնարկատերը կամ առևտրային կազմակերպությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը ձեռնարկատիրական գործունեության իրավունք է ձեռք բերում որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից, իսկ նույն օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ իրավաբանական անձը՝ օրենքով սահմանված կարգով, ենթակա է գրանցման:

Վկայակոչելով նախորդ պարբերության բլանկետային նորմերը՝ պետք է նշել, որ տվյալ հանցագործության օբյեկտը, բացի քաղաքացիական իրավունքի ճյուղով կարգավորվող իրավահարաբերություններից ուղղակիորեն փաստում է նաև անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները:

Վ. Վ. Վոլժենկինը նշել է, որ ՌԴ քրեական օրենսգրքի 169-րդ հոդվածով (համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածին-Մ. Մ.) նախատեսված հանցագործության կատարումը կոպտորեն խախտում է անձի՝ ձեռնարկատիրական գործունեությանը վերաբերվող սահմանադրական երաշխիքները, դրանցով նախատեսված իրավունքներն ու ազատությունները, ինչն էլ հենց հանդիսանում է տվյալ հանցագործության օբյեկտը⁷:

Նույն հայեցակետն է արտահայտել նաև Ն. Ա. Լոպաշենկոն⁸:

Համաձայնվելով վերոգրյալ դոկտրինալ մեկնաբանությունների հետ՝ իրավամբ պետք է նշել, որ ՀՀ հիմնական օրենքի մակադրակով, նույնպես, նախատեսված են ձեռնարկատիրական գործունեության համար այնպիսի կայուն

⁶ Տե՛ս տրված հղումների 4-6-րդ կետերի էլեկտրոնային հասցեներով:

⁷ Տե՛ս *Волженкин Б.В.*, Экономическая преступность. СПб., 2002, էջ 121:

⁸ Տե՛ս *Лопашенко Н.А.*, Вопросы квалификации преступления в сфере экономической деятельности, Саратов, 1997, էջեր 15-16, 26:

երաշխիքներ, ինչպիսիք են, օրինակ, 59-րդ հոդվածում նշված՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու անձի իրավունքը, բարեխիղճ մրցակցության, շուկայում գերիշխող դիրքի և մենաշնորհի արգելքների վերաբերյալ, կամ 86-րդ հոդվածում՝ պետության հիմնական նպատակներում ներառելով նաև գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը, և վերջապես ու ամենից առաջ՝ 1-ին հոդվածով նախանշված՝ պետության՝ սոցիալական հատկանիշը:

Վերադառնալով քրեական իրավունքի դաշտ՝ կարող ենք արձանագրել, որ քննարկվող հանցակազմի օբյեկտի նկատմամբ ոտնձգությունը ևս կարող է վնաս հասցնել վերը շարադրված սահմանադրաիրավական երաշխիքներին, սակայն քրեաիրավական առումով քննարկման առարկա պետք է դառնա այն հարցը, թե արդյո՞ք այն իր բնույթով արտահայտում է քրեական օրենսդրության նպատակներն ու ոգին և որքան՞ով է արդարացված հենց տվյալ հանցատեսակի նախատեսումը, քանի որ միակ դեպքը չէ, որ որևէ իրավախախտմամբ կարող է որոշակիորեն խաթարվել նաև տվյալ սահմանադրորեն պահպանվող իրավահարաբերությունները և հատկապես ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ գլխի, եթե ոչ բոլոր հանցատեսակները, ապա դրանց գերակշիռ մեծամասնությունն ինքնին կարող են վտանգել պետության տնտեսությանը, իսկ որոշ դեպքերում նաև դրա բաղադրատարր հանդիսացող ձեռնարկատիրական հարաբերություններին, ուստի օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը՝ որպես հանցագործություն նախատեսելու արդարացված լինելու հանգամանքի վերաբերյալ եզրահանգում կարող ենք կատարել՝ ուսումնասիրելով դրա մյուս քրեաիրավական հատկանիշները:

Օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելու օբյեկտիվ կողմը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրսևորվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ.

1. անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումը, առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպության գրանցումը կամ վերագրանցումն ակնհայտ անհիմն մերժելը,
2. դրա գրանցումից կամ վերագրանցումից չարամտորեն խուսափելը,
3. որոշակի գործունեություն իրականացնելու համար հատուկ թույլտվությունը (լիցենզիան) տալն ակնհայտ անհիմն մերժելը,
4. հատուկ թույլտվություն (լիցենզիա) տալուց չարամտորեն խուսափելը,
5. անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի իրավունքները և շահերն ակնհայտ ապօրինի սահմանափակելը,
6. անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի գործունեությանը ակնհայտ ապօրինի միջամտելը:

Անհատ ձեռնարկատիրոջ, առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպությունների գրանցմանն առնչվող հարցերը կարգավորվում են «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքով, իսկ լիցենզավորմանը վերաբերվող իրավա-

հարաբերությունները՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի որպես անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումը մերժելու հիմքերն են.

«(...) 1. Անձի որպես անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումը մերժվում է, եթե՝

1) նա արդեն հաշվառված է որպես անհատ ձեռնարկատեր,

2) նրա ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկատվությունը ամբողջական չեն,

3) նա օրենքով սահմանված կարգով զրկվել է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:

2.Որպես անհատ ձեռնարկատեր՝ անձի հաշվառումն աննպատակահարմարության շարժառիթով մերժել չի թույլատրվում: (...)»

Նույն օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձանց գրանցման մերժման հիմքերն են՝ 1. Իրավաբանական անձի գրանցումը մերժելու հիմքերն են՝

«(...) 1) իրավաբանական անձի կազմավորման՝ օրենքով սահմանված կարգի խախտումը,

2) սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված փաստաթղթերը չներկայացնելը,

3) ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունն օրենքին կամ իրավաբանական անձի ներկայացրած այլ փաստաթղթերին, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված դեպքի,

4) նոր գրանցվող (ստեղծվող) առևտրային կազմակերպության հիմնադրի, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի՝ օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկված և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չլինելը,

5) անվանման անհամապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին, եթե անվանման գրանցումը մերժվել է, և անձը չի ներկայացրել այլ անվանում,

6) ռեդումիցիլացման նպատակով դիմել է այն պետության իրավաբանական անձ, որը նշված է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պետությունների ցանկում, որոնց իրավաբանական անձինք չեն կարող ռեդումիցիլացվել Հայաստանի Հանրապետության փարածքում:

2.Առևտրային կազմակերպությունների կանոնադրության անհամապատասխանությունն օրենքին հիմք չէ իրավաբանական անձի պետական գրանցումը մերժելու համար:

3.Իրավաբանական անձի գրանցումն այն ստեղծելու աննպատակահարմարության շարժառիթով մերժելն արգելվում է: (...)»

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզիայի

հայտը ենթակա է մերժման երբ.

1) դիմողի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված,

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն օրենքի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին,

3) դիմող իրավաբանական անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվել հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով,

4) դիմող ֆիզիկական անձն իրավունք չունի զբաղվել հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով,

4.1) լիցենզիայի տրամադրումը հակասում է միջազգային անվտանգության ապահովման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին,

5) օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված են այլ դեպքեր:

Նույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիա ստանալու կամ լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման կամ լիցենզիայի վերաձևակերպման կամ լիցենզիայի կամ լիցենզիայի ներդիրի պատճենի տրամադրման կամ գործունեության իրականացման վայրի փոփոխման կամ այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ հայտերի մերժման, լիցենզիայի գործողության կասեցման մասին, լիցենզիայի գործողության կասեցման մասին որոշումը չվերացնելու մասին լիցենզավորող մարմնի որոշումը, ինչպես նաև որակավորման ստուգման արդյունքները կարող են բողոքարկվել դատական կամ վերադատության կարգով:

Կարող ենք արձանագրել, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքների վերոգրյալ նորմերի և ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի օբյեկտիվ կողմի հատկանիշների միջև կան մի շարք տարբերություններ՝ կապված նրա հետ, որ եթե վարչական իրավունքի ճյուղի նշված իրավանորմերը անձի պետական գրանցման (հաշվառման) կամ լիցենզիայի հայտը մերժելու հիմքերը հիմնականում վերաբերվում են դիմողի կողմից թույլ տրված խախտումներին, ապա քրեական օրենսգրքի իմաստով՝ օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելու շրջանակներում, դիմողի գործողություններն իրավաչափ են, բխում են օրենսդրական պահանջներից, սակայն համապատասխան իրավասու մարմինը «ակնհայտ անհիմն» կերպով «չարամտորեն խուսափում է» կատարելու իր ունեցած պոզիտիվ պարտականությունները:

Հարկ է արձանագրել, որ տերմինաբանական տեսանկյունից դժվար է գատորոշել, թե ինչ չափանիշներով է որոշվում, թե վերը թվարկված իրավական հիմքերի առկայության պայմաններում՝ խուսափումն իր բնույթով չարամիտ է, թե ոչ, կամ գրանցելն ու վերագրանցելուց անհիմն մերժելը եղել է ակնհայտ է, թե ոչ, ուստի կարծում ենք, որ տվյալ կարգավորումներն, ըստ էության, լինելով գնա-

հատողական բնույթի իրավակիրառի համար կարող են ստեղծել արհեստական խոչընդոտներ, հատկապես այն պայմաններում, երբ տվյալ հանցակազմը ձևական է և հասցված վնասի պայման նախատեսված չէ, իսկ չարամտության կամ ակնհայտության բնույթը հողվածի դիսպոզիցիայում բացակայում է:

Անդրադառնալով օբյեկտիվ կողմի ակտիվ ներգործության ձևերին, այն է՝ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի իրավունքներն ու շահերն ակնհայտ ապօրինի սահմանափակելուն, ինչպես նաև այլ ակնհայտ ապօրինի միջամտությունը դրա գործունեությանը, որը կատարել է պաշտոնատար անձի կողմից՝ իր պաշտոնական դիրքն օգտագործելով կամ նույն հողվածի երկրորդ մասով՝ վերջինիս կողմից ապօրինի ստուգումներ նշանակելով կամ անցկացնելով, ապա դրանք ուղղակիորեն պետք է փոխկապակցել հանցագործության սուբյեկտիվ առանձնահատկություններին հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ գործողությունների կատարման սուբյեկտը հատուկ է և միայն տվյալ պայմաններում է հնարավոր խոսել օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելու հանցակազմի օբյեկտիվ կողմի առկայության մասին:

Կարծում ենք, որ այն պայմաններում, երբ վերը մեջբերված հատուկ կարգավորումներով սպառիչ կերպով թվարկված են պետական գրանցման (հաշվառման) կամ լիցենզիայի հայտը մերժելու հիմքերը, առավել ընդունելի կլինեն, որպեսզի օգտագործվեն «ապօրինի» տերմինը, ինչպես օրինակ հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելու վերաբերյալ 196-րդ հողվածի վերաբերյալ Նախագծի հայեցակետն է, որով գործող նորմը Նախագծի 266-րդ հողվածով վերաձևակերպվել է՝ որպես հրապարակային սակարկություններ կամ գնումներ անցկացնելիս չարաշահումների, և որի դիսպոզիցիայում՝ տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումներն ամբողջացվել են «ապօրինի եղանակ» իրավաբանական տերմինի տակ, կամ պարզապես հղում կատարվեին բլանկետային իրավանորմերին, ինչպես օրինակ, գործող ՀՀ քրեական օրենսգրքի 190.2-րդ և տարբեր այլ հողվածներում է: Այլ հարց է, թե նշված հիմքերի խախտումներով անհատ ձեռնարկատիրոջը կամ իրավաբանական անձին պետական գրանցման (հաշվառման) կամ լիցենզիայի հայտը մերժելով, ինքնին չի՞ ստեղծվի այնպիսի իրավիճակ, որով տվյալ արարքը կկլանվի պետական ծառայության դեմ ուղղված համապատասխան հանցագործության մեջ, և ոչ նպատակահարմար կդարձնի տվյալ արարքների նախատեսումը՝ օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելու հանցատեսակում, ինչին էլ կանդրադառնանք, երբ կքննարկվի սույն հանցագործության սուբյեկտիվ առանձնահատկությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հողվածի 2-րդ մասում, ըստ էության, ներկայացված լինելով այլ հանցակազմ, թվարկված են պաշտոնատար անձի կողմից հետևյալ գործողությունների կատարումը.

1. ապօրինի ստուգումներ նշանակելը,
2. ապօրինի ստուգումներ անցկացնելը:

Ներպետական դոկտրինալ մեկնաբանություններում նշվել է, որ քննարկվող

հանցագործությունն իր մեջ ունի երկու առանձին հանցակազմեր⁹, սակայն կարծում ենք, որ դրանք իրականում երեքն են, քանի որ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումը, առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպության գրանցումը կամ վերագրանցումն ակնհայտ անհիմն մերժելը, դրա գրանցումից կամ վերագրանցումից չարամտորեն խուսափելը, որոշակի գործունեություն իրականացնելու համար հատուկ թույլտվությունը (լիցենզիան) տալն ակնհայտ անհիմն մերժելը, հատուկ թույլտվություն (լիցենզիա) տալուց չարամտորեն խուսափելը վերաբերվում են մինչ համապատասխան ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելուն, խախտում վկայակոչված՝ կազմակերպության գրանցումը կամ վերագրանցումը կամ հատուկ թույլտվությունը (լիցենզիան) իրավաչափորեն մերժելու իրավական հիմքերը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի իրավունքները և շահերն ակնհայտ ապօրինի սահմանափակելը, անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի գործունեությանը ակնհայտ ապօրինի միջամտելը՝ կարող է կատարվել արդեն գործող անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի նկատմամբ:

Միաժամանակ պետք է նշել, որ միջամտել բառը հայերենի արմատական բառարանում բացատրվում է որպես 1) ուրիշների գործերի մեջ մտնել, նրանց գործերին խառնվել կամ 2) մասնակցել, չեզոք չմնալ, հեռու չկանգնել կամ 3) իբրև միջնորդ մտնել ուրիշների գործի մեջ¹⁰, իսկ սահմանափակել ներգործական բայը նկարագրվում է որպես՝ 1) սահմանափակ՝ չափավոր դարձնել, սահմանի՝ շրջանակների մեջ դնել չափավորել, 2) մի բանի սահմանի վերջը դնել՝ չափավորել¹¹: Տվյալ բառերը հարաբերակցելով՝ խոչընդոտել բառի իմաստի հետ, որը նույն բառարանում բնորոշվում է որպես՝ դժվարություններ, ու արգելքներ հարուցել, որևէ գործողություն՝ աշխատանք՝ առաջընթաց և այլն խանգարելու համար¹², կարող ենք փաստել, որ այնքանով որքանով, որ մի կողմից ուրիշների գործերի մեջ մտնելը, կամ նրանց գործերին խառնվելը սերտորեն առնչվում են խոչընդոտել բառի խանգարելու իմաստին, իսկ որոշ դեպքերում նաև նույնանում է, իսկ մյուս կողմից սահմանափակել բառի չափավորելու իմաստը կարող է ընդգրկվել նաև դժվարություններ, ու արգելքներ հարուցելու իմաստի մեջ, հետևաբար կարելի է մտահանգում կատարել առ այն, որ միջամտելը և սահմանափակելը, ինքնին կարող են հանդիսանալ որպես խոչընդոտման յուրատեսակ դրսևորումներ, այսինքն՝ տերմինաբանական տարրնթերցումներից խուսափելու համար տվյալ գործողությունները կարող են պարզապես չթվարկվել կամ թվարկումից հետո ավելացվի «և այլ ձևերով խոչընդոտելու» պայմանը:

Վերոգրյալի հաշվառմամբ կարող ենք փաստել, որ փուլային և բովանդակային առումով անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումը, առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպության գրանցումը կամ վերագրանցումն ակնհայտ ան-

⁹ Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, Հատուկ մաս, դասագիրք բուհերի համար, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 414:

¹⁰ Տե՛ս Հ. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1930, հատոր 3, էջ 539:

¹¹ Տե՛ս նույն տեղում, հատոր 4, էջ 264:

¹² Տե՛ս նույն տեղում, հատոր 2, էջ 552:

հիմն մերժելը, դրա գրանցումից կամ վերագրանցումից չարամտորեն խուսափելը, որոշակի գործունեություն իրականացնելու համար հատուկ թույլտվությունը (լիցենզիան) տալն ակնհայտ անհիմն մերժելը, հատուկ թույլտվություն (լիցենզիա) տալուց չարամտորեն խուսափելը, էապես տարբերվում են անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի իրավունքները և շահերն ակնհայտ ապօրինի սահմանափակելու, անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի գործունեությանը ակնհայտ ապօրինի միջամտելու արարքներից, իսկ ապօրինի ստուգումներ նշանակելը կամ անցկացնելն իր հերթին՝ հիմնովին այլ հանցակազմ է:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը կարող դրսևորվել միայն ուղղակի դիտավորությամբ:

Հատկանշական է, որ ինչպես նշվեց վերևում, ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասը ձևական է, իսկ նույն հոդվածի 3-րդ մասը՝ որպես տվյալ հանցագործության որակյալ տեսակ, նախատեսում է հետևանքի առաջացում, այն է՝ խոշոր չափի վնասի պատճառում, ինչը տվյալ հանցագործության միայն ուղղակի դիտավորության մեղքի ձևի նախատեսումը դարձնում է խնդրահարույց, ուստի արհեստական անհարմարություններից խուսափելու համար արդարացված կլինեն, որպեսզի տվյալ հանցագործության առաջին մասը ևս նախատեսեր հետևանք և համարվեր նյութական հանցատեսակ, ինչպես գործող քրեական օրենսդրության 22-րդ գլխի տարբեր հոդվածներում է:

Հարկ է նշել, որ քննարկվող հանցագործությամբ հասցված վնասը, որն ուղղված է տնտեսական գործունեությանը և դրա բաղադրիչը հանդիսացող ձեռնարկատիրական հարաբերություններին՝ որպես անմիջական օբյեկտի, զուգահեռաբար կարող է վնասել նաև ոչ գույքային, սակայն իրենով էական համարվող արժեքի (ընդհուպ մարդու առողջությանը)՝ որպես ֆակուլտատիվ օբյեկտի: Նման իրավիճակներում պետք է նկատի ունենալ, որ բոլոր այն դեպքերում, երբ ֆակուլտատիվ օբյեկտին հասցված վնասն իր բնույթով կլինի էական, բայց դրա համար վրա հասնող պատժի չափը չի գերազանցի հիմնական օբյեկտը ոտնձգելու համար նախատեսված սանկցիայի շեմը, այն պետք է դիտարկվի միայն ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի տիրույթում և հանցագործության որակման և իրավական գնահատական տալու տեսանկյունից որևէ խնդիր չի առաջացնի, սակայն միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ կոնկրետ դեպքերում՝ լրացուցիչ արարքների կատարումը կապվում է պաշտոնատար անձի հետ, սակայն չի տրվում դրա հասկացությունը:

Մի շարք հեղինակներ նշել են, որ ՌԴ քրեական օրենսգրքի 169-րդ հոդվածի համատեքստում՝ պաշտոնատար անձի հասկացությունը պետք է մեկնաբանել նույն օրենսգրքի 285-րդ հոդվածի (համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի հետ) իմաստով¹³, մինչդեռ հայ տեսաբանների կողմ

¹³ Տե՛ս *Наумов А.В.*, Российское уголовное право: Курс лекций. В 3-х т. – 4-е изд., перераб. И доп., М., 2008, էջ 362; *Лебедева В.М.*, Комментарий к Уголовному кодексу Российской Федерации, М., 2007, էջ 257, *Радченко В.И.*, *Мижалина А.С.*, Комментарий к Уголовному кодексу Российской Федерации, СПб., 2007, էջ 218:

մից իրավացիորեն նշվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասում տրված պաշտոնատար անձի հասկացությունը նույն օրենսգրքի 187-րդ հոդվածի համատեքստում կիրառելի չէ, քանզի այն վերաբերում է միայն 29-րդ գլխին, և, քանի որ քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է, ապա բաց է մնում այն հարցը, թե ու՞մ պետք է համարել պաշտոնատար անձ այս հոդվածի իմաստով¹⁴ և արտահայտվել տեսակետ այն մասին, որ տարամեկնաբանություններից խուսափելու նպատակով, անհրաժեշտ է լրացնել նշված օրենսդրական բացը¹⁵:

Վերոգրյալի հաշվառմամբ արձանագրում ենք, որ

1. Ոչ առևտրային կազմակերպությունների մասով պետք է հստակեցվի, որ քննարկվող հանցագործության հետևանքները կարող են տարածվել բացառապես դրանց տնտեսական գործունեությանը, քանզի մնացած այլ դեպքերում, երբ կխոչընդոտվի տվյալ կազմակերպությունների բնականոն գործունեությունը՝ այլ օբյեկտներին վնաս հասցնելու արդյունքում, դրանք կորակվեն քրեական օրենսգրքի այլ հոդվածներով:

2. Կարծում ենք, որ անհատ ձեռնարկատիրոջը կամ իրավաբանական անձին պետական հաշվառում կամ լիցենզիա տրամադրելու իրավական հիմքերը սահմանող հատուկ կարգավորումների պայմաններում հոդվածի դիսպոզիցայում առկա գնահատողական չափանիշներն արդարացված չեն և դրա փոխարեն կարող էր օգտագործվել «ապօրինի» տերմինը, կամ հղում կատարվեին համապատասխան բլանկետային իրավանորմերին:

3. Քննարկելով հանցագործության օբյեկտիվ կողմը, դատողություն ենք անում այն մասին, որ քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված մեկ հոդվածում ներառված միանգամից երեք առանձին հանցակազմերը, դրանք են՝ 1) անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումը, առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպության գրանցումը կամ վերագրանցումն ակնհայտ անհիմն մերժելը, դրա գրանցումից կամ վերագրանցումից չարամտորեն խուսափելը, որոշակի գործունեություն իրականացնելու համար հատուկ թույլտվությունը (լիցենզիան) տալն ակնհայտ անհիմն մերժելը, հատուկ թույլտվություն (լիցենզիա) տալուց չարամտորեն խուսափելը, 2) անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի իրավունքները և շահերն ակնհայտ ապօրինի սահմանափակելը կամ վերջիններիս գործունեությանը ակնհայտ ապօրինի միջամտելը և 3) ապօրինի ստուգումներ նշանակելը կամ անցկացնելը, որն ինչպես նշվեց վերևում, ռացիոնալ մոտեցում չէ:

4. Այն պայմաններում, երբ նույն հանցակազմը՝ որպես որակյալ տեսակ է սահմանում խոշոր չափով վնասը, միայն ուղղակի դիտավորությամբ մեղքի ձևի նախատեսումը՝ ըստ մեզ, խախտում է իրավաբանական որոշակիության (res judicata) սկզբունքը, ուստի նպատակահարմար կլիներ, որպեսզի տվյալ հանցագործության առաջին մասը ևս նախատեսեր հետևանք և համարվեր նյութական

¹⁴ Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, Հատուկ մաս, դասագիրք բուհերի համար, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 414:

¹⁵ Տե՛ս նույն տեղում:

հանցատեսակ, ինչպես գործող ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ գլխի մի շարք նորմերում է, քանի որ գործող կարգավորումը հակասում է քրեական օրենսդրության ինստիտուցիոնալ կառուցակարգերին:

5. ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածում բացակայում է պաշտոնատար անձի հասկացությունը, ինչը քրեական օրենսգրքի անալոգիայի կիրառման արգելքի պայմաններում, տարամեկնաբանությունների տեղիք է տալիս:

Հանցագործության օբյեկտիվ կողմի ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկած և մատնանշված այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածն իր մեջ, ըստ էության, պարունակում է երեք առանձին հանցակազմեր և տվյալ փաստը համադրելով հանցագործության մյուս տարրերի հետ՝ աշխատության իրավական դիրքորոշումների լույսի ներքո զարգացնելով այն՝ արձանագրում ենք, որ քրեական օրենսգրքն ավելորդ չձանրաբեռնելու, քրեական օրենսդրության հատուկ մասի նույն հոդվածում տարբեր հանցակազմեր ներառելուց զերծ մնալու, քրեական օրենսգրքի նպատակային կիրառությունն ապահովելու նպատակով սույն հանցատեսակի նախատեսման արդարացված լինելու վերաբերյալ բարձրացված իրավական հարցին պետք է պատասխանել տարբերակված հանցակազմերն իրարից անջատ դիտարկելու պայմաններում:

Ըստ մեր տեսակետի՝ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումը, առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպության գրանցումը կամ վերագրանցումն ակնհայտ անհիմն մերժելու, դրա գրանցումից կամ վերագրանցումից չարամտորեն խուսափելու, որոշակի գործունեություն իրականացնելու համար հատուկ թույլտվությունը (լիցենզիան) տալն ակնհայտ անհիմն մերժելու, հատուկ թույլտվություն (լիցենզիա) տալուց չարամտորեն խուսափելու, իսկ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսվարողի նկատմամբ ապօրինի ստուգումներ նշանակելու կամ անցկացնելու գործողությունները կարող են կատարվել բացառապես պաշտոնատար անձի կողմից, որը ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ կամ համանման այլ հոդվածների (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի) առկայության պայմաններում ապահովում է դրանց հակազդման մեխանիզմները, որոնցով հնարավոր կլինի պատշաճ իրավական գնահատական տալու կատարված արարքներին, իսկ, եթե դրանք դիտարկենք պաշտոնատար անձի՝ անբարեխղճության կամ անփութության պայմաններում, ապա կարող ենք փաստել, որ տվյալ դեպքերում կատարված արարքները կորակվեն ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Այսպիսով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածում՝ սույն աշխատությամբ արդեն իսկ փաստված՝ անորոշ ձևակերպումների, առանց պաշտոնատար անձի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ գլխի իմաստով հասկացությունը տալու, ձևական և նյութական հանցագործության միասնական կառուցակարգերի բացակայության, ինչպես նաև նմանաբնույթ արարքները՝ քրեական օրենսգրքի այլ հոդվածներով որակման ենթակա լինելու՝ պայմաններում նախորդ պարբերությամբ թվարկված արարքների կատարման համար հենց օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելու հանցատեսակով քրեա-

կան պատասխանատվություն նախատեսելը՝ մեր համոզմամբ, ընդունելի չէ:

Միևնույն ժամանակ անդրադառնալով՝ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի իրավունքները և շահերն ակնհայտ ապօրինի սահմանափակելուն կամ վերջիններիս գործունեությանն ակնհայտ ապօրինի միջամտելուն, փաստում ենք, որ այդ համատեքստում քննարկվող հանցատեսակի նախատեսումը քրեական օրենսդրությունում նպատակամետ է՝ պայմանավորված նախևառաջ այն հանգամանքով, որ տեսականորեն և գործնականորեն չի բացառվում այնպիսի իրավիճակ, երբ տնտեսվարողի ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական բնականոն գործունեությունը կարող է խոչընդոտվել նաև ընդհանուր սուբյեկտի կողմից, և դրա տակ պետք է ներառել ցանկացած այնպիսի արարք, որի հետևանքները կտարածվեն տվյալ գործունեության ձևերին, այդ թվում նաև սահմանափակելու կամ միջամտելու եղանակներով:

Ներկայացվածը որոշակի զուգահեռներ կարող է ունենալ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածով նախատեսված՝ հակամրցակցային գործունեություն հանցագործության հետ, սակայն վերջինի սուբյեկտը, հատուկ է՝ այն է՝ անհատ ձեռնարկատեր, կազմակերպության ներկայացուցիչ կամ պաշտոնատար անձ, բացի այդ, դրա կատարման վերջնանպատակը շուկան տարածքային սկզբունքով բաժանելը, այլ տնտեսավարող սուբյեկտների շուկա մուտք գործելուն խոչընդոտելը, տնտեսավարող այլ սուբյեկտներին շուկայից դուրս մղելը, խտրական գներ սահմանելը կամ պահպանելն է, որոնք իրենց բնույթով առավել ինտենսիվ են, քան օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելու հանցագործության դեպքում:

Ամփոփելով, սույն հոդվածում արտահայտված իրավական դիրքորոշումները, հանգում ենք հետևության, որ օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը՝ քրեական օրենսդրությամբ չնախատեսելն ընդունելի չէ, սակայն դրա հետ մեկտեղ, այն ենթակա է լրամշակման, ուստի տվյալ հանցագործության հետագա օրենսդրական զարգացման կապակցությամբ հանդես ենք գալիս հետևյալ առաջարկներով.

1) Քննարկվող հանցատեսակի շրջանակներում ոչ առևտրային կազմակերպությունների մասով, պետք է հստակեցվի, որ տվյալ հանցագործության մասին կարող է խոսք գնալ այն դեպքում, երբ կոնտեքստի տվյալ կազմակերպության գործունեությունը՝ տնտեսական հարաբերությունների մասով:

2) կարծում ենք, որ այն պետք է զերծ լինի գնահատողական ձևակերպումներից,

3) դրանում պետք է բացառվի մի քանի հանցակազմերի առկայությունը և պատիժ սահմանվի միայն արդեն իսկ օրինական հիմունքներով գործող ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեության դեմ ուղղված այն արարքների համար, որոնք կխոչընդոտեն տվյալ ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունեություն իրականացնող անձի բնականոն գործունեությանը՝ առանց դրա առանձին եղանակների թվարկման,

4) այն պետք է ձևակերպվի նյութական հանցակազմով, որի վերջնանպատակը կլինի տնտեսավարողի բնականոն ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական

գործունեությանը խոչընդոտելը, ինչի արդյունքում վերջինիս կհասցվի գույքային կամ այլ էական վնաս,

5) հանցագործության սուբյեկտ պետք է հանդիսանա ընդհանուր սուբյեկտը, իսկ պաշտոնական դիրքի օգտագործմամբ տվյալ արարքի կատարման դեպքում այն պետք է որակվի պետական ծառայության դեմ ուղղված համապատասխան հանցագործության հատկանիշներով,

6) 4-րդ կետի համատեքստում տվյալ հանցագործության սուբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել նաև անուղղակի դիտավորության ձևով:

Annotation. Entrepreneurial and other economic relations are broad-based relationships in the context of which criminal law plays vital role, and any criminal encroachment on them is subject to legal scrutiny, which in turn requires thorough examinations.

The article discusses a number of issues related to the crime of impeding entrepreneurial and other economic activity. Taking into account the author's observations on the crime, a number of suggestions were made within the framework of the work, which may be of theoretical and practical significance.

Аннотация. Предпринимательские и другие экономические отношения - это отношения на широкой основе, где в контексте сохранения последних уголовное право играет важную роль, и любое преступное посягательство на них подлежит надлежащей правовой проверке, что, в свою очередь, требует тщательного исследования.

В данной статье рассматривается ряд вопросов, связанных с преступностью и препятствующими предпринимательству и другой экономической деятельности. Учитывая замечания автора насчет данной преступной деятельности, в работу внесен ряд предложений, которые могут иметь теоретическое и практическое значение.

Բանալի բառեր - օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտել, հանցակազմ, լիցենզավորում, պետական հաշվառում, պաշտոնատար անձ, օբյեկտիվ և առանձնահատկություններ, սուբյեկտիվ առանձնահատկություններ:

Keywords: obstruction of legal business and other economic activities, crime element, licensing, state accounting, official, objective features, subjective features.

Ключевые слова: воспрепятствование легальной предпринимательской и иной экономической деятельности, состав преступления, лицензирование, государственный учет, должностное лицо, объективные признаки, субъективные признаки.

Մ. Մելիքյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության առաջատար մասնագետ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող, էլ. փոստ՝ melikmelikyan1994@gmail.com

Ներկայացվել է խմբագրություն 11.03.2020 թ., տրվել է գրախոսության 11.03.2020 թ., երաշխավորվել է իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Տիգրան Սիմոնյանի կողմից, ընդունվել է տպագրության 22.05.2020 թ.: